

**ՌՈՒԲԻՆԵԱՆ ԺԲ. ԴԱՐԱՎԵՐՋԻ ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ
ԴԱՆԳ ՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՈՃՈՎ
ԱՌԵՂԾ ՈՒԱԾԱՅԻՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ¹**

ՄԱՅՔԸԼ ԴԵՆԻՍ Օ՝ ՀԱՐԱ
michaeldennisohara@ntlworld.com

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Այս յօդուածը կը քննարկէ խնդրայարոյց դրամ մը, որ հակասական կարծիքներու դուռ բացած է: Ան դանդ մըն է - շուրջ՝ 5.77 կրամ ծանրութեամբ, հաւանաբար՝ 1197ի արտադրութիւն - որ թերեւս կարճատեւ կեանք ունեցած է իբրեւ նոր թողարկում եւ փորձատիպ մը: Անկէ ի ձեռի ունինք 8 օրինակ²: Ան օրինական դրամ մը չէ (legal tender currency). ոմանք գայն կը նկատեն կեղծիք (forgery)³, ուրիշներ՝ երեւակայածին (fantasy piece), դեռ ուրիշներ՝ նախատիպ (prototype)⁴:

Այս յօդուածին առաջին տարբերակը, գրուած եւ շրջանառութեան գրուած է 1988ին՝ ստուգելու համար թէ քննարկուող դրամէն անծանօթ օրինակներ գոյութիւն ունին: Յօդուածի շրջանառութեան իբրեւ արդիւնք, հանգուցեալ Զարեհ Պտուկեան ազնուութեամբ տեղեկացուց մեզի⁵, որ ինք ունի արծաթեայ եւ պղնձեայ մէկական օրինակ եւ ճան Սլոքումի հաւաքածոյէն երկու այլ պղնձեայ օրինակներու ալիւմինիում թուղթով պատրաստուած նմանահանութիւններ: Շրեկա Քետարի՝ Իսրայէլէն, ազնուութեամբ մեզի ուղարկեց լուսանկարները 1965ին Աքրայի մէջ յայտնաբերուած պղնձեայ մէկ օրինակին⁶: Երկու կապարէ օրինակներու գոյութիւնը ազնուութեամբ հաղորդուեցան⁷ Սուզըն Թայլըր-Սմիթի (այժմ Տիկ. Ֆիլիպս) եւ Պրն. Ժ. Դ. Սքէյկի կողմէ:


Նկատի առնելով որ նոր յայտնութիւններու մասին չենք իմացած, կը կարծենք որ նախնական ծաւալուն յօդուած մը լաւագոյն ձեւն է այս ուղղութեամբ յառաջանալու, յոստալով որ յաւելեալ նորութիւններ կը ստացուին⁸:

- Քննարկուող դանդին օրինակները կը գտնուին--
 - Պրինձներէն երկուքը՝ Սլոքումի հաւաքածոյին մէջ.
 - Պրինձ հատ մը եւ միակ արծաթը՝ հանգուցեալ Պտուկեանի հաւաքածոյին մէջ (նկարներ Զ-ա-դ, նկարուած ալիւմինիում թուղթի նմանահանութիւններէն).
 - Պրինձ հատ մը՝ Քետարի մօտ (նկար է.).
 - Հինգերորդ պղինձը՝ Օ՝ Հարայի հաւաքածոյին մէջ (նկար Ա.).
- Երկու կապարէ «գրոշմուածքները»՝ Թայլըր-Սմիթի եւ Սքէյկի մօտ (նկարներ Ը.1 եւ Ը.2)⁹:

Այս դանդին կապարէ օրինակին մէկը կարելի եղած է քննել (Թայլըր-Սմիթինը՝ 13.143 կրամ, 28-31 մմ): Անոր առանցքային ուղղութիւնը երկու հարիւր եօթանասուն աստիճան է, նման՝ Օ՝ Հարայի եւ Պտուկեանի օրինակներուն: Քետարի պղինձը սակայն ունի երեք հարիւր աստիճան առանցքային ուղղութիւն, որմէ կը հետեցուի որ կաղապարները իրարու չեն ազուցուած¹⁰: Քետարի դրամին տրամագիծը քիչ մը մեծ է, շուրջ 32մմ եւ հետեւաբար «կարկին»ի գիծին մեծամասնութիւնը նշմարելի է (կարկինի գիծին մասին՝ ստորեւ):



Տախտակ 1



Տախտակ 2

Սոյն յօդուածին նիւթ կը դարձնենք պղնձեայ մեզի ծանօթ հինգ դրամները, մինչ երկու կապարէ օրինակներուն¹¹ եւ արծաթեայ օրինակին քննութիւնը կը թողունք յետագայի, մանաւանդ որ Պտուկեան կը հաւաստէ թէ իր արծաթն ու պղինձը եւ Սլոբուժի երկու պղինձները նոյն կաղապարներէն են¹²: Դժուար է, սակայն, վստահօրէն ստուգել՝ այլմիջիով թուղթէ պատրաստուած նմանահանութիւններէն, թէ երկու կապարէ եւ Քետարի ու մեր պղինձներն ալ արդեօք զարնուած են նոյն կաղապարներէն:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Կիլիկեան Հայկական Պետութիւնը երկու հանգրուան ունի՝ իշխանական (1080-1196) եւ թագաւորական (1198-1375): Իսկ Լեւոնի իշխանութիւնը կը տարածուի 1187էն 1218, եւ նոյնպէս ունի հանգրուաններ. Լեւոն՝ իբր Պարոն Լեւոն Բ. (1187-1196), ժամանակաւոր կամ Նախասօման շրջան (1196-1198) եւ իբր Թագաւոր Լեւոն Ա. (1199?-1218):

Երես. T L E I I N (?) I Π / V A Π Δ >

Երեսի խորագրութեան լրիւ ձեւ՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ¹³ Կիսանդրիին կէս դիմանկարը դէպի աջ թեքած է, գլխուն կը կրէ գդակ մը որ ունի ծոպաւոր երեք զազաթներ. արձանագրութիւնը մարգարտաշար զոյգ շրջանակներուն միջեւ է¹⁴, մետաղաձոյլի դուրսի եզերքը պարապ է (նման նոյն ժամանակի բիւզանդական ոսկեգրամներու), «կարկին»ի գիծի հետք կ'երեւի:

Կռնակ. + I < P C I L K 3 (?) Π I

Կռնակի խորագրութեան լրիւ ձեւ՝ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ ՍԻՍ (կամ ՏԱՐՍՈՆ)¹⁵

Քալող առիւծ մը, դէպի աջ, պոչը վեր բարձրացած եւ ճիւղաւորուած լեզու, վերեւ երկու թեւով խաչ¹⁶, վեց ատամով աստղ աջ ու ձախ դաշտերուն մէջ: արձանագրութիւն մարգարտեայ գոյգ շրջանակներուն միջեւ, մետաղածոյի դուրսի եզերքը պարապ:

Մետաղածոյի տրամագիծ՝ 28-29 մմ, կաղապարի տրամագիծ՝ 23 մմ: Պահպանուածութիւն՝ շատ լաւ, որոշ մասեր տկար եւ թեթեւօրէն կրկին զարնուած (նկար Ա.):



Տախտակ 3

Տախտակ 4

ՎԵՐՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խորագրութիւն/Տառեր.

Վերոյիշեալ խորագրութիւնը համագրութիւն մըն է, կազմուած բոլոր տարբեր օրինակներուն նկարներէն¹⁷: Բոլոր այս օրինակները վատ կերպով զարնուած են. ոմանց վրայ անոնք լրիւ չեն երեւիր (նման՝ Ռուբինեան Պարոնութեան շրջանի դրամներուն): Երեսի խորագրութեան “V” տառին երկրորդ թեւը բացակայ է օրինակի մը վրայ (նկար Զ.դ), բայց յտակօրէն նշմարելի է ուրիշներու վրայ¹⁸: Ըստ երեւոյթին, տառերը կազմուած են դրոշմիչներու/սեպերու օգնութեամբ, քան թէ ամբողջութեամբ քանդակուած են կաղապարին¹⁹:

Թէեւ տառերու դրոշմը տկար է որոշ տեղեր եւ կարելի չէ ըսել թէ դիւրաւ վերծանելի է, բայց ընթերցումը կարելի է աւելի հաւանականօրէն մեկնաբանել որպէս ՏԱՐՍՈՆ քան թէ ՍԻՍ: Վերջին տառերը (I) ՄՄՈՒ (ըստ երեւոյթին ԱՐ մասամբ բաղադրեալ), աւելի մօտ է ՏՄՄՈՒ (ՏԱՐՍՈՆ)²⁰, եւ չի շփոթուիր ՍԻՍ բառին հետ: Նաեւ սկիզբի մասին ԼԵԻՈՆ բառին «ԼԵ» տառերը եւ կռնակի ՇԻՆԵԱԼ բառին առաջին տառը՝ «Շ» շատ յստակ են: Երեսին վրայի վերջին տառը՝ “>” կարծես կը ներկայացնէ “<” «Հ» տառը (ՀԱՅՈՅ բառին

առաջին տառը): Յստակ չէ թէ Լեւոն ներկայացուած է որպէս թագաւոր կամ իշխան կամ այլ մակդիր ՀԱՅՈՑ:



Տախտակ 5

Տախտակ 6

Շրջափակի կիրարկումը, խորագրութեան երկու մարգարտաշար շրջանակներու միջեւ, մասնաւորաբար դրամի երեսին վրայ, ուշագրաւօրէն նման է Լեւոնի պարոնութեան շրջանի²¹ դրամաճատութեան: Ռուբինեան թագաւորներու արծաթեայ դրամներու խորագրութեանց շրջանակները մարգարտաշար են, բայց Սիւ դրամաճատարանի անուսով արձանագրուած պղինձները ունին դժաւոր շրջափակ²²: Հետաքրքրական եւ ուշագրութեան արժանի է նաեւ, որ մետաղաճոյլի տրամագիծը (29 մմ) շատ մեծ է կաղապարին համեմատ (23 մմ), բայց այս տրամագիծը պատահական չէ, ինչպէս որ կարկինի շրջանակաձեւ գիծերը ցոյց կու տան (տե՛ս՝ ստորեւ եւ՝ ծանօթ. 57): Այսուհանդերձ, կաղապարին մեծութիւնը պահուած է Լեւոնի իշխանական դրամներուն նման²³:

Մասնագէտներ նկատած են, թէ միջնադարեան Հայաստանի պղինձեայ դրամները անխնամ կոխուած են: Քանի որ այդ թողարկումները նախատեսուած են ներքին առեւտուրի համար, ուրեմն պէտք չկար խնամեալ գործադրութեան՝ ի տարբերութիւն արծաթեայ դրամներուն, որոնք գործածուած են միջազգային առեւտուրի եւ հատուցումներու համար²⁴: Ինչ կը վերաբերի իշխանական դրամներու արձանագրութեանց, ապա անոնք չափազանց խեղճուկ են: Այսուհանդերձ, խնդրոյ առարկայ դրամի տառերու դրոշմը, նուազ խեղճուկ է քան՝ իշխանական դրամներունը²⁵, բայց շատ աւելի խեղճուկ է քան Ռուբինեան թագաւորութեան դրամներուն վրայի արձանագրութեան վարպետութիւնը (տե՛ս՝ նկար Բ.): Այս առումով, մարդ կրնայ նկատել թէ շուրջ 23 մմ մեծութեամբ կաղապարին միջոցը, որ օգտագործելի է արձանագրութեանց համար, շատ աւելի փոքր է քան՝ Սիւի աւելի ուշ թողարկուած դրամներունը (օգտագործելի միջոց՝ շուրջ 28 մմ):



Տախտակ 7

Տախտակ 8

Սակայն, չնայած կաղապարի չափին, կարծես թէ տառերու արձանագրութեան աշխատանքը կատարած է յոյն (կամ լատին) քանդակագործ մը, ինչպէս Լեւոն բառին «E» տառը (փոխան «Ե»-ի) կը թելադրէ: Աշխատանքի հմտութեան որակի եւ տիպերու նմանութիւնը ակնյայտ է Լեւոնի իշխանական դրամներուն ու Անտիոքի Դքսութեան դրամներուն միջեւ²⁶: Այս նմանութիւնը եւ այն իրողութիւնը, որ Անտիոքի պատմութիւնը սերտօրէն հանգուցուած էր Կիլիկեան Հայաստանի²⁷ դիւանագիտական զարգացումներուն՝ կրնանք ենթադրել, որ դրամահատարանի մէջ աշխատող օտար քանդակագործներու առկայութիւնը անհաւանական չէ²⁸: Միւս կողմէ, խորագրութեան մէջ տարօրինակ տառերու առկայութիւնը կասկածելի կը դարձնէ հայերէն այբուբենին ծանօթ քանդակագործի մը առնչութիւնը այդ դրամներուն ձեւաւորման: Թերեւս իսլամ կաղապարագործ մը աշխատած է, եթէ նկատի առնուի երեսի խորագրութեան սկիզբի գիծը (անկատար խաչանիշի մէկ մասը), մանաւանդ որ միջնադարու այս շրջանին իսլամական աշխարհը դրամահատութեան ասպարէզին մէջ աւելի յառաջացած էր քան Արեւմուտքը: Հաւանճեան չի տարակուսիր, որ «այս դրամները գործն են օտար (ոչ-հայ) քանդակագործի մը, որ իր առջեւ իբրեւ օրինակ ունեցած է քազաուրական, քան թէ իշխանական ժամանակաշրջանի դրամները: Եթէ այս դրամները ժամանակաւոր շրջանի թողարկումներ էին, ոճը, մասնաւորապէս կոնակիինը, պէտք է ըլլար աւելի լաւ քան՝ իշխանական դրամներունը, մինչդէռ ոճը ստորադաս է Լեւոն Բ.ի իշխանական դրամներէն»:²⁹ Մենք կը կարծենք որ օտար դրամահատ քանդակագործներ կրնան աշխատած ըլլալ²⁹, մանաւանդ որ ժամանակաւոր դրամները անհրաժեշտօրէն պէտք չունին ըլլալու աւելի որակաւոր քան՝ գիրենք նախորդողները): Կաղապարներու շարժումը, վարպետ հայախօս դրամահատ քանդակագործներու

պակասը, կանխահաս մահը (վտանգաւոր ժամանակներուն), հանգամանքներ՝ որոնք այդ ժամանակներուն կը վերաբերէին: Իրողութեան մէջ շատ պատճառներ կան, թէ ինչու Լեւոն Բ-ի «դէպի ձախ ձիավար ասպետ» պատկերատիպի հմուտ դրամահատը աշխատանքի համար «օգտագործելի չէր կոնար ըլլալ»:

Յատկանշական պարագայ է այն, որ մարդ կրնայ որոշ նմանութիւն տեսնել այս յօդուածի դրամին եւ հարաւային Իտալիոյ մէջ՝ ԺԲ. դարուն կոխուած Ֆրեսերիք Բ-ի արտասովոր դրամին (Augustalis) միջեւ: Արտասովոր, որովհետեւ դիմանկարը կատարուած է ԺԲ. դարէն շատ աւելի յառաջացեալ ոճով: Տարօրինակ հայկական այս դրամը, անշուշտ, նոյնպէս կրնար կերտուած ըլլալ Իտալացի վարպետի մը կողմէ, նկատի առնելով նման դիմանկարի երեւումը ԺԴ-ԺԵ. դարերէն:

Խորագրութիւնները, ամէնէն կանուխ իշխանական դրամի վրայ անհասկնալի եւ գլխադիր տառերով քանդակուած ըլլալէ անկախ, վերագրուած են Պարոն Ռուբէն Ա-ին (1080-1099) կամ Պարոն Կոստանդին Ա-ին (1095-1099)³⁰: Ըստ Պտուկեանի դրամներէն ոմանց վրայի բնորոշ գլխադիր տառերը կրնան փոխանցման շրջանը հանդիսանալ՝ երբ անցում կատարուեցաւ փոքր, հասարակ տառերէն դէպի աւելի գեղարուեստական գլխադիր տառերը, որոնք քանդակուած են ուշ շրջանի իշխաններու դրամներուն վրայ³¹: Արդարեւ, գլխադիր տառերը ընկալեալ սովորութիւն եղած են, սակայն կ'երեւի թէ փոքր, հասարակ տառերու պատահական գործածութիւն ալ եղած է Սիս հատանուած հասարակ բայց հագուազիւտ պղնձեայ դրամներուն վրայ: Հետաքրքրական է բաղադատել Հեթում Ա-ի եւ Իկոնիայի սուլթաններուն (1228-1245) արծաթեայ երկլեզուեան դրամներու զանազան թողարկումներուն երեսները (տե՛ս՝ նկարներ Ժ-1 եւ Ժ-2): Ժ-1 օրինակին մէջ տառերը ինամքով կերտուած են եւ երբեմն իրարու կցուած: Ժ-2 օրինակին մէջ կցուած տառեր չկան եւ տառերէն ոմանք ներկայացուած են պարզ ուղղահայեաց գիծերով³²: Ի մտի ունենալով վերը ըսուածը, ՏՄՄտին համար IUTUnI (ԹԱՐՍՈՒՄ կամ ՏԱՐՍՈՆ) արձանագրումը դրամահատարանի անուան անհեթեթ արտայայտութիւն մը չի թուիր:

Կշիռք

Պտուկեանի³³ չափազանց պիտանի գծագիրը ցոյց կու տայ, որ Սիսի դրամահատարանին թողարկած Լեւոն Ա. թագաւորի սովորական պղնձեայ դանդ միաւորը 7-8.30 կրամ կը կշռէ, իսկ աւելի ուշ Լեւոն Բ-ի փոքր պղնձեայ քարտէզ միաւորը՝ 4-5 կրամ, (2.80-4 կրամ՝ Հեթում Բ-ի գահակալութեան դրամը): Գիտենք որ վեց դանդը հաւասար էր մէկ արծաթեայ դրամի արժէքին³⁴: Քննարկուող դանդը որ կը կշռէ 5.77 կրամ եւ քիչ մը աւելի թեթեւ է քան օրինաչափ պղնձեայ դանդը (7-8.30 կրամ), եւ որ վերջնականօրէն ընտրուեցաւ Սիսի մէջ՝ ծառայած է զինք զատորոշելու իշխանական դրամներէն: Սիսի դրամահատարանի թողարկած դանդը (նկար Բ-) 7.43 կրամ է, Քետարինը՝ 6.61 կրամ, Օ՝ Հարայինը՝ 5.77 կրամ: Արդե՞ք Տարսոնի այս ժամանակաւոր չափանիշ-դրամը սակագրուած է քիչ մը բարձր՝ հաւանաբար տասը դանդ միաւորներ մէկ արծաթեայ միաւոր դրամին փոխան:

Առիւծի Պատկերատիպ

Մէկ առիւծով պատկերատիպը քանդակուած է Լեւոն Ա-ի արծաթեայ երկ-դրամին, եւ իր կէս ու քառորդ դրամական միաւորներուն վրայ, նաեւ՝ չափազանց հազուադիւտ քանի մը օծման դրամներուն վրայ: Պտուկեան տրամաբանական կը գտնէ ենթադրել, որ «մէկ առիւծ» պատկերատիպով թողարկումները Լեւոն Ա. թագաւորին կողմէ կոխուած առաջին դրամներն են³⁵: Ուրեմն կարելի է եզրակացնել, որ մէկ առիւծով դրամական համակարգը կոխուած է 1196էն մինչեւ 1198 (այն թուականը երբ Լեւոն յայտարարեց իր արքայական տիտղոս ստանալը, ինչպէս նաեւ թագ մը՝ Բիւզանդիոնի Ալեքիոս Գ. կայսրէն), երբ ինք թագադրուեցաւ Հենրի Զ. կայսեր դիւանապետ Քոնրատ Հիլտես-հայմին եւ պապական պատուիրակ Մայնցի Արքեպիսկոպոսին կողմէ: Լեւոն օծուեցաւ Հայ Եկեղեցուոյ վեհապետ՝ Գրիգոր կաթողիկոս Ապիրատին կողմէ, մեծ ու փառաւոր արարողութեամբ մը Տարսոնի տաճարին մէջ, Յունուար 6ին³⁶:

Մէկ առիւծով դրամական համակարգին հետեւեցան քաջածանօթ օծման դրամները: Օծման դրամներու չափազանց հազուադիւտ օրինակներու կռնակին դրոշմուած է դէպի աջ «մէկ առիւծ»ի պատկերատիպը. սակայն զլիւսաւոր թողարկումը ունի «երկու առիւծ»ի տիպը, որ չափազանց յատկանշական եւ ինքնատիպ զինանշանի պատկերատիպ մըն է: «Մէկ առիւծ» պատկերատիպով դրամական համակարգին չափազանց հազուադիւտութիւնը մղած է Պտուկեանը հարցադրելու՝ «արդեօք ատոնք տարբէ՞ր փողերանոց մը կոխուած են. կոխուած Տարսոնի՞ մէջ, Սիսի փողերանոցին հաստատումէն առաջ»³⁷: **Բ. Ա. Ժակոբ**³⁸ կը նկատէ որ «Սիսի Կիլիկեան Հայաստանի մայրաքաղաքն էր եւ դրամահատարանին օրինաւոր վայրը, բայց հաւանական է, որ արծաթեայ երկդրամ (մէկ առիւծով) թողարկումը կոխուած ըլլայ Տարսոն՝ փոխան Սիսի»³⁹: Պտուկեան կը հաւաստէ որ Սիսէն տարբեր դրամահատարանի մէջ դրամ կոխուելու առաջին նախընթացը եղած է Կոստանդին Գ-ի (1344-1363) շրջանին եւ թէ՛ յայտնի չէ թէ՛ երբ դրամահատարան հիմնուեցաւ եւ դրամ կոխուեցաւ Տարսոնի մէջ (տե՛ս՝ ստորեւ, եւ՝ ծանօթ. թիւ 70): Ի դէպ, Տարսոնի մէջ կոխուած են արծաթեայ ու պղնձեայ հազուադիւտ դրամներ Կոստանդին Գ-ի գահակալութեան՝ 1344էն մինչեւ 1360, երբ քաղաքը ինկաւ մեմլուքներուն ձեռքը, բայց շարունակեց իբրեւ դրամահատարան մեմլուքներուն իշխանութեան ներքեւ:

Չափազանց հազուադիւտ դէպի աջ «մէկ առիւծ» տիպը պատկերուած է օծման դրամի թողարկման ետին: Ասոր սերտ նմանութիւնը՝ ինդրոյ առարկայ, Տարսոն արձանագրուած մեր պղնձեայ դանդին հետ (երկդրամ համակարգին առիւծը դրոշմուած է դէպի ձախ), կարծես կը հաստատէ Պտուկեանի ենթադրութիւնը, որ այս ժամանակ երկու դրամահատարաններն ալ կը գործէին: Անտարակոյս, «օծման շքեղ արարողութիւնը» կատարուեցաւ Տարսոնի⁴⁰ մէջ: Պատմական իրադարձութիւնը յիշատակելու համար՝ յայտնի է որ կոխուեցան նկատելիօրէն տարբեր երկու տեսակ օծման դրամներ, մին՝ սակաւաթիւ, եւ միւսը՝ չափազանց հազուադիւտ, եւ այդ ալ նուազագոյն՝ մէկ թողարկում: Ենթադրաբար հազուադիւտ տեսակը պիտի կոխուէր այն քաղաքը, ուր օծումը տեղի պիտի ունենար: Հաւանական է որ «մէկ առիւծ» պատկերատիպով երկդրամներուն փոքրածաւալ կոտորակները կոխուած ըլլան Տարսոն եւ սակաւա-

թիւ (բայց աւելի հասարակ) «երկու առիւծ» պատկերատիպով օծման դրամը կոխուած ըլլայ 1196ին, նոր հիմնուած Սիսի դրամահատարանը, որ այնուհետեւ արտադրեց թագաւորութեան նկատելիօրէն մեծաքանակ գլխաւոր դրամական համակարգը, մինչեւ թագաւորութեան անկումը՝ 1375ին:

Կարելի է ենթադրել որ խնդրոյ առարկայ պղնձեայ դանդ միաւորը ուր թագաւորը կ'երեւի առանց թագի, կոխուած է Տարսոնի մէջ, օծման արարողութենէն առաջ⁴¹: Թերեւս այդ դանդին ետեւը ծառայած է որպէս նախատիպ «մէկ առիւծ»ով դէպի աջ օծման դրամներու⁴² եւ ուրեմն հաւանականօրէն այս թողարկումը կրնայ թուագրուել շուրջ 1197ին, երբ Լեւոն ընդունուած էր իբրեւ թագաւոր, բայց պաշտօնապէս չէր օծուած: Յստակ եւ զօրաւոր կապակցութիւն մը կայ նաեւ Տարսոն կոխուած այս նոր դասու դանդին եւ Սիս կոխուած աւանդական (ու իրաւատ) շքեղացուած «առիւծի գլուխ» պղնձեայ դանդին միջեւ (նկար Բ.)⁴³: Վերջինս կը հանդիսանար Լեւոն Ա. թագաւորի հիմնական պղնձեայ դրամը եւ մեզի հասած է շատ մեծ քանակով⁴⁴: Տարսոնի այս խնդրոյ առարկայ դրամը թերեւս ծառայած է իբրեւ նախատիպ մը Սիսի պղնձեայ դրամի երեսին ու կոնակին համար՝ աստղերն ու կրկնաթեւ խաչը պահելով (աւելի սովորական ձեւով որպէս հայրապետական խաչ), եւ մէկ առիւծը զանց ընելով, որով կարելի կը դառնար ներդաշնակութիւնը պահել «երկու առիւծ»ով արծաթեայ դրամական համակարգին հետ:

Կոնակի շրջագրութեան բանաձեւը՝ Շինեալ ի քաղաքն Սիս, քանդակուած Սիսի դանդ միաւորին վրայ, նոյնպէս կրնար սերած ըլլալ Տարսոնի դրամէն:

Դիմանկարը

Տրեսերիք Պարպարոսայի քաջածանօթ, շուրջ 1231ի ոսկեդրամը (augustale), հազուագիւտ եւ առանձնակի օրինակ մըն է դիմանկարի ոճի մը, որ յստակօրէն իր ժամանակէն առաջ անցած է եւ պարզօրէն նախանշան հանդիսացած վերածնունդի դարաշրջանին: Այս դրամը կը պատկերացնէ բարձրաքանդակ կիսանդրի մը, ըստ՝ հնադարեան կամ հռոմէական ոճին: Քննարկուող դանդի դիմանկարը, թէեւ աւելի նուազ «գեղարուեստական» հմտութեամբ կատարուած է, սակայն յստակօրէն «վերածնունդի» դարաշրջանի ոճով է: Այս պարագային՝ ընդհանուր պատկերացումը չափազանց ինքնատիպ է եւ իր ժամանակէն շատ աւելի առաջ է, սակայն որոշակի թեքնիքական եւ գործնական հմտութեան պակասը գզալի է: Մազը ներկայացուած է «երկար կախուած» ձեւով, որ աւելի սովորական կիսանդրիի ոճ մըն է ԺԴ դարու երրորդ տասնամեակին համար: Այս երկար ու կախուած յատկանշական «բաշի նման» մազը, մասնաւորաբար նկար Ա.ի ոճով, կ'երեւի միայն ԺԵ դարու վերջ-ԺԶ դարու սկիզբին (տե՛ս՝ նկար Թ.4)⁴⁵: Անիկա կրնայ աւելի հեշտութեամբ նկատուել եթէ մէկը թերթատէ J. Porteosի ուսումնասիրութիւնը՝ *Coins in History*⁴⁶:

Ժակոբ⁴⁷ երկարօրէն քննած է, թէ Սիսի դանդերուն վրայ քանդակուած դիմանկարը առիւծի⁴⁸, թէ՛ թագաւորի գլուխ կը ներկայացնէ: Պտուկեան գործածած է «թագաւորին առիւծանման գլուխը, թագակիր եւ սօրոսատր» արտայայտութիւնը⁴⁸: Տարսոնի դրամին վրայ «վերածնունդի դարի դիմանկարը» հազիւ թէ առիւծանման կրնայ նկատուել. բաշի նման մազով թագաւորի գլուխը՝ կապակցուած թագաւորի անուան բառախաղին, կրնար սքանչելիօրէն ստեղ-

ծած ըլլալ ներշնչումը առիւծանման (leonine) գլուխի մը, կամ՝ շքեղացուած տարբերակով՝ (առիւծի թագադրուած գլուխի մը՝ երեք-չորրորդ դէպի աջ)⁴⁹։ Յետագային, Լեոնի գահակալութեան մնացեալ շրջանին, ասիկա հանդիսացաւ Սիւ կոխուած պղնձեայ դրամի երեսին օրինաչափ պատկերատիպը (նկար Բ.)։ Տարսոնի դրամին յայտնաբերումը, որ կրնայ շատ լաւ փորձ մը ըլլալ ցուցադրելու յատկանշուած նմանութիւն մը Սիւի դանդին, յստակօրէն կը մատնանշէ, որ Սիւի «առիւծանման» գլուխը պարզօրէն գինանշան է կամ հանրաձանաչ ներկայացուցչութիւն մըն է առիւծի մը գլուխին⁵⁰։

Ռուբինեան Հայաստանի դրամներու պատկերատիպերն ընդհանրապէս գերազանցօրէն ինքնատիպ են։ Պատմական այս շատ կարեւոր թողարկումը նոյնպէս, բացառութիւն մը չէ։ Հետաքրքրական է բաղդատել դրամներու գեղարուեստական զարգացումի մակարդակները՝ ժամանակակից ուրիշ դրամներով (օրինակի համար՝ Անգլիոյ ձան թագաւորին (1199-1216) կարճ խաչով փենիները, թէեւ գերազանց են որոշ այլ դրամներու բաղդատմամբ, բայց հազիւ թէ ոգեւորիչ են կամ նախատիպ)։ ԺԴ.-ԺԵ. դարերու վերածնունդի շրջանի դիմանկարներուն (նկար Թ.1 եւ Թ.2) հետ քննարկուող դանդին գուգահեռականը շատ տպաւորիչ է։ Անշուշտ ոճը անտաշ է, ականջը ճիշդ տեղը չէ քանդակուած եւ ընդհանուր առմամբ՝ գեղարուեստական հմտութիւնը աւելի նուազ է քան վերածնունդի շրջանի դրամներուն պարագային։ Թագաւորին գլուխը իշխանական կամ միջնադարեան դքսային գեղակով մը վերաներկայացնելը պէտք է նաեւ նախատիպ համարուի այդ ժամանակաշրջանին համար⁵¹։ Գլխարկը չի ներկայացներ թագ մը. աւելի կը յիշեցնէ գոկները, որոնք կ'երեւին ԺԴ.-ԺԵ. դարերու դիմանկարներուն վրայ։ Նման գոգակ մը, մէկ կեղրոնական ծոպով, եւ ուրիշ մը՝ երեք գագաթներով, պատկերով մը ցուցադրուած են, գրչանկարի մը մէջ, շուրջ 1270ին⁵² (նկարներ Թ.2 եւ Թ.3 եւ բաղդատութեան համար՝ Թ.4)։ Դժուար է խուսափիլ այն եզրակացութենէն, որ այս դիմանկարը (նկար Ա.) լուրջ փորձ մըն է Լեոն Ա. թագաւորի յատկանշական նմանութեան։ Մանր կամ քառակուսի ծնօտը եւ արտաձիգ շրթունքը կը յիշեցնեն հռչակաւոր «Հափսպուրկի շրթունքը»։ Այս երեւոյթը, միացած «բաշի նման» մագին, յստակօրէն ձեւով մը «առիւծանման» (leonine) երեւոյթ կու տայ Լեոնին։

Դանդին Բնոյթը

Կարծէք լուրջ փորձ մը եղած է նախաձեռնելու պղնձեայ մեծաքանակ⁵³ դանդերու դրամահատութեան մը, որուն համար գործածուած են իշխանական դրամներու չափի կաղապարներ։ Սակայն, այս դանդերը ունեցած են աւելի իմաստալից խորագրութիւններ քան իշխանական կանուխ շրջանի թողարկումները՝ նոր թագաւորութեան համարժէք։

Նկատելով որ ցարդ միայն ութը օրինակներ յայտնաբերուած են՝ երեք տարբեր մետաղներով, եւ բոլորն ալ նոյն կաղապարներով (տե՛ս՝ ստորեւ), եւ մտաբերելով հանդերձ որ նոյն դրամի բազմաթիւ օրինակներ կոխուած են զանազան մետաղներով (բիւզանդական դրամական համակարգին մէջ, օրինակ), այս դանդերը կրնան նախնական ձեւեր ըլլալ՝ ապագայ դրամներու համար, որոնք որոշ պատճառով երբեք չեն թողարկուած, բայց եւ այնպէս ծառայած են իբրեւ ներշնչման աղբիւր կամ նախատիպ՝ Սիւ թողարկուելիք⁵⁴ աւե-

լի մեծ դրամահատութեան մը, աւելի ծանր չափանիշերով: Այն՝ որ այս դանդաբէրէն մէկը արծաթ է եւ երկուքը կապար⁵⁵, կ'ամրապնդէ այն մտածումը, որ ասոնք փորձի կտորներ կամ ալ նախատիպեր էին: Ի դէպ, ետեւի պատկերատիպի նմանը գործածուած էր արծաթեայ օծման դրամներու թողարկումներէն մէկուն վրայ: Անսովոր չէ նոյն կաղապարներու գործածութիւնը տարբեր մետաղներով դրամ կոխելու համար:

ԺԲ. դարավերջը, յատկապէս օծման ժամանակաշրջանին, հաւանաբար եղած է Կիլիկեան Հայաստանի դրամահատութեան համար փորձառական շրջան մը՝ թագաւորութեան հիմնադրութեամբ, վաճառականական գործարքները իրականացնելու եւ փոխառութեան կարիքները գոհացնելու առումով: Իշխանական անկանոն ու հին թողարկումներէն դէպի մեծաքանակ եւ աւելի ինքնուրոյն դրամահատութիւնը ասոր վկայութիւնն է: Թերեւս քիչ մը զարմանալի է, որ ուրիշ նախատիպեր կամ փորձի կտորներ չեն հասած մեզի:

Կարկինի Գիծեր

Մեթքալֆ առաջինը իմ ուշադրութեանս յանձնեց, որ քննարկուող պղնձեայ դանդիւն երեսը բարակ շրջանակաձեւ գիծերու հետքեր կան⁵⁶, մասնաւորաբար՝ 0, 120, 190 եւ 230 աստիճաններուն (նկար Ա., մեծցուածները) վրայ: Ասկէ կ'ենթադրենք որ «կարկին»ի պէս բան մը գործածուած է, շրջանակ գծելու համար պղնձեայ մետաղի թերթին վրայ, կլոր կտրելէ առաջ, որմէ ետք դրամը պիտի կոխուէր: Այս նոյն, մազի չափ բարակ «կարկին»ի գիծը կը նշմարուի չափազանց հագուագիւտ իշխանական դրամներու օրինակներուն երեսներուն վրայ՝ նկարներ Գ.1, Դ.1, Ե.1ա եւ Ե.3⁵⁷: Հետաքրքրական է եւ ուշադրութեան արժանի, որ այս «կարկին»ի գիծերուն կը հանդիպինք դրամի երեսին վրայ, բացառութեամբ Քեսարի օրինակին, ուր այս գիծերուն կը հանդիպինք դրամի ետին: Իսկ այս խումբի քննուած իշխանական դրամներէն Կոստանդին Ա.ի (նկար Դ.1) պարագային, «կարկին»ի գիծերը գատորոշելի են դրամի երկու կողմերուն ալ: Պղինձի մետաղէ դատարկ (blank) թերթեր, դրամի մեծութեամբ կլոր կտրուած, ուղղահայեաց իրարու վրայ դիզուած են կամ ալ անմիջապէս գետեղուած են երեսի ու կռնակի կաղապարներու միջեւ՝ դրամ կոխելու համար: Սակայն եթէ պատահէր, որ մէկէն աւելի պարապ կլոր մետաղներ դրուէին կաղապարներու միջեւ, անկասկած, պակասաւոր չկոխուած մետաղը գետին պիտի իյնար: Վստահօրէն, այս յօդուածի հրատարակումէն ետք, հաւաքորդներ իրագեկ պիտի ըլլան ու գիտնան, թէ ինչ պէտք է փնտռուի՝ եւ պիտի յայտնաբերուին իշխանական դրամներ որոնց ետին նշմարելի պիտի ըլլան «կարկին»ի գիծերը:

Իշխանական դրամներուն մեծամասնութիւնը անկանոն ձեւ ունի՝ ոմանք ուրիշներէն քիչ մը աւելի կամ պակաս: Օրինակի համար Թորոս Բ.ի (1144-1168) պղինձը⁵⁸, որ վեցանկիւն է, ունի պարզ մկրատի վեց կտրուածքներ, փոխանակ կտրուելու «կարկին»ի կլորին համեմատ: Ըստ երեւոյթին, գէթ իշխանական շրջանին եւ մինչեւ այս ժամանակաւոր շրջանի թողարկումը՝ շուրջ 1197 (Պարոնութեան վերջը), պղնձեայ պարապ մետաղները մկրատով կտրուած են թերթերէն կամ մետաղի երիզներէն: Սիւսի պղնձեայ դանդերը թէեւ նոյն ծաւալն ունին, բայց ծանր ըլլալով շատ հաստ պիտի ըլլային այս ձեւով կտրելու հաւանաբար անոնց համար աւելի տարբեր եւ իմաստալից ձեւեր գործածեցին՝

թերեւս ձուլեցին պարապ եւ կլոր ծաւալով մետաղներ կաղապարով կոխելէ առաջ:

Մի՞ս, Թէ՞ Տարսոն

Քէյմպրիճի Համալսարանի միջնադարեան պատմութեան նուիրուած գիրքին մէջ կատարուած դիտողութեան համաձայն (որ, սակայն, չէ կրկնուած կամ ծանօթագրուած աւելի ուշ)⁵⁹, Լեւոն իր կառավարութեան նստավայրը տեղափոխեց Տարսոնէն Միս: Լեւոնի այս նորայայտ դրամով կը պարգուի, որ թերեւս նախապէս որոշուած էր Տարսոնն ընել մայրաքաղաք: Յամենայնդէպս, այս դրամը կը հաստատէ Տարսոնի կարեւորութիւնը գոնէ երկրի պատմութեան սկզբնական շրջանին: Պրբի կը հաստատէ՝ «Տարսոն եւ Միս, իւրաքանչիւրը ժամանակի ընթացքին, մայրաքաղաք եղած են հայկական երկրին»⁶⁰: Ժամանակակից ուսումնասիրութիւններուն մէջ կը հարցադրուի թէ ո՛ւր եւ ե՛րբ տեղի ունեցաւ Լեւոնի թագադրութիւնը: Պրբի յտակօրէն կը յայտարարէ, թէ «Լեւոն օծուած է Միսի տաճարին մէջ, Աստուածայայտնութեան տօնին, 1198,- բայց ծանօթագրութեամբ մը, թէ՛ - կարգ մը պատմաբաններ Տարսոն կ'ըսեն»⁶¹: Պտուկեան, սակայն, կու տայ Տարսոնը իբրեւ օծման վայր եւ կը նշէ երկու թուական. իր կանուխ հրատարակուած գիրքին մէջ՝ 1199⁶², իսկ իր վերջին աշխատանքին մէջ՝ 1198⁶³: Հրբի գիրքն ալ կը յիշէ թէ օծումը տեղի ունեցաւ Տարսոն. «Լեւոն մեծ շուքով թագադրուեցաւ Տարսոնի մէջ»⁶⁴: Սակայն, Բանսիմընի համաձայն օծման վայրը Միսն է՝ 1198ին⁶⁴: Խաչակրութեան նուիրուած նոր ուսումնասիրութեանց մէջ⁶⁵ - ինչպէս՝ Boase⁶⁶ - օծումը հաստատօրէն դրուած է Տարսոն, Յունուար 6, 1198, Ս. Սոփիա տաճարին մէջ:

Մայրաքաղաքը Միս փոխադրելու ականքը պատճառներէն մէկը Կիլիկիոյ աշխարհագրական դիրքը պիտի ըլլար. դաշտերը հարուստ ու բարեբեր՝ սակայն պաշտպանելը շատ դժուար է, մինչ լեռները՝ ծածկուած են անտառներով եւ բազմաթիւ կիրճեր ունին (քարտէս 3): Իշխանութեան աթոռը Միս տեղափոխելէ ետք, շատ տրամաբանական պիտի ըլլար հիմնել նոր կամ երկրորդ դրամահատարան մը: Այս առումով, տեղին է Փրոֆ. Կրիսթընի⁶⁷ մէկ դիտողութիւնը: Ակնարկելով հազուագիւտ արծաթ «բիւզանդական պատմական դրամներու շարքին»⁶⁸ վրայի տառերուն, ան կը գրէ. «RMը ներմուծուած էր զանազանելու Հռոմի արտադրութիւնները Ռաւեննայի պատկանողներէն, քանի որ Իտալիոյ մէջի դրամահատարանը՝ նախապէս կարիքը չէր զգացած անհրաժեշտ ստուգումի եւ ապագային ալ նման բան մը չընտրեց»: Առիճի գլուխով Միսի պղնձեայ դրամը յստակօրէն ցոյց կու տայ դրամահատարանի անունը, որով կը հասկցուի թէ կարիքը կար ստուգելու կամ գատորոշելու Միսի արտադրութիւնները, ենթադրելով՝ որ դրամահատարան չնշող մետաղադրամները ճանչցուած են որպէս Տարսոնի թողարկումներ: Եթէ պղինձը թողարկուած էր ներքին շրջանառութեան, իսկ արծաթը՝ արտաքին վաճառականութեան համար, ապա յարմար նկատուած կրնայ ըլլալ երկու դրամահատարաններու վայրեր. մին՝ ծովի մօտ (արծաթ արտադրող), միւսը լեռներու մէջ՝ պղինձ արտադրող (քարտէս 1 եւ 2): Այս ենթադրութիւնը կ'ամրապնդուի երբ նկատենք որ Միսէն տարբեր դրամահատարանի մը անունով արձանագրուած առաջին դրամները Լեւոն Բ.ի (1270-1289) հազուագիւտ արծաթեայ թողար-

կումն են՝ ծովեզերեայ Այաս քաղաքի անունով⁶⁹: Ասիկա կը գուգադիպի Արեւելքի քրիստոնեայ իշխանութիւններու յաջողութեան անկման շրջանին: Առաջին դրամները որոնք արձանագրուած են Տարսոն դրամահատարանի անունով կը պատկանին Կոստանդին Գ.ին (1344-1363)⁷⁰: Մեմլուքները Կիլիկիա ներխուժեցին եւ կողոպտեցին բազմաթիւ կարեւոր քաղաքներ, ներառեալ՝ Տարսոնը, բայց չկրցան դրաւել Սիսը⁷¹: Ուստի, վերը եղած դիտողութիւններէն անկախ՝ ոչ թէ հաւանականութիւն կար այլ՝ իրական կարելիութիւն, որ ոչ միայն «մէկ առիւծ»ով դրամները, այլ առանց դրամահատարան յատկանշող բոլոր արծաթեայ դրամները եւս, մինչեւ շուրջ 1270, հատանուած ըլլան Տարսոն:

Մեծ Հայքը ամբողջութեամբ արեւելեան էր, բայց Ռուբինեան Հայաստանի քաղաքակրթութեան ուղղութիւնը աւելի դէպի արեւմուտք էր քան՝ արեւելք: Թէեւ Կիլիկեան Հայաստանի դիւանագիտական շահագրգռութիւնը բաժնուած էր Եւրոպայի եւ Ասիոյ միջեւ, սակայն խաչակրութեան պատմութեամբ ան նսեմացուած էր (քարտէս 3)⁷² հակառակ որ ան իրողապէս եղաւ եւրոպական երկիր մը, որ Հռոմի Եկեղեցոյ հետ փոխադարձ համաձայնութիւն փնտռեց⁷³: Լեւոն Մեծագործի (1187-1218) եւ իր փեսային Հեթում Ա.ի (1226-1269) իշխանութեանց ներքեւ «[Կիլիկեան] Հայաստան հասաւ իր փառքի գագաթնակէտին, եղաւ քաղաքութիւն եւ որոշակի դեր ունեցաւ աշխարհագրական դիւանագիտութեան եւ միջազգային վաճառականութեան մէջ: Ասոնց բոլորը՝ շնորհիւ այս երկու գահակալներու վարչական հանճարին, ռազմական խիզախութեան, դիւանագիտական հմտութեան, եւ բոլորէն աւելի իրենց վեհ կառնատեսութեան»⁷⁴: Կիլիկեան Հայաստանի պատմութիւնը սերտորէն օղակուած է խաչակիր երկիրներու հետ եւ նմանապէս բաւականաչափ հետաքրքրական է, բայց դժբախտաբար շատ լաւ չէ ուսումնասիրուած: Խորքին մէջ, Կիլիկեան Հայկական Թագաւորութիւնը տակաւին կը սպասէ համապարփակ աշխատանքի մը⁷⁵: Այս կացութեան մէջ, դրամները - իբրեւ պատմութեան աղբիւր - աւելի կարեւորութիւն եւ նշանակութիւն կը գգենուն: Օրինակի համար, քննարկուող դանդին թողարկման տնտեսական եւ աշխարհագրական առնչութիւնը մէկզի դնելով հանդերձ, վերածնունդի ոճով դիմանկար մը ունենալը զօրավիզ կը կանգնի իմաստաբանութեան եւ արքունի ուսմունքի մը առկայութեան⁷⁶:

ՎԱԻԵՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Այսպիսի ցնցող (խիստ զարմացուցիչ որակուած բանասէրի մը կողմէ) դիմերեսի մը պատկերատիպը, որ ըստ երեւոյթին ճշգրտորէն կը պատշաճի օժման շրջանին, ինքնաբերաբար կրկնութեան, կեղծիքի, հատիչով վերամշակուած ըլլալու հարցեր պիտի յառաջացնէ. մասնաւորաբար՝ երբ ծանօթ են միայն հինգ պղինձ, մէկ արծաթ եւ երկու կապար օրինակներ: Պղինձներէն եւ կապարներէն մէկական օրինակներ երկու անգամ զարնուած են, բայց վստահօրէն հատիչով վերամշակուած չեն:


Մարդ պիտի ակնկալէր, որ կեղծարար մը քիչ մը աւելի որակաւոր գործ արտադրէ՝ մասնաւորաբար դրամահատարանի անուան տառերով: Իշխանական շրջանի թողարկումները, ինչպէս վերը նշեցինք, ընդհանուր առմամբ ունին «բարբարոս» երեւոյթ մը, յատկապէս՝ իրենց արձանագրութեան ձեւաւորումով: Ոմանք այս երեւոյթը կը վերագրեն օտար քանդակագործներու, որոնք թերեւս բաւարար ծանօթ չէին հայերէն լեզուին: Լեւոն Ա. Թագաւորի սո-

վորական խոշոր պղնձեայ դանդերը, որոնք Սիսի դրամահատարանին կը պատկանին, շատ հասարակ են եւ շուկայի վրայ ձուլ պղինձի գինէն աւելի պակաս արժէք ունին, կամ քիչ մը աւելի՝ եթէ լաւ պահպանուածութիւն ունին: Պտուկեան կը բացատրէ. «Անցեալին շատ քիչ Ռուբլնեան կեղծ դրամներ մէջտեղ ելած են: Այս դրամներուն մասին գիտութեան չզոյութիւնը եւ նաեւ գնողներու պակասը, կեղծարարները չէ քաջալերած»⁷⁷:


Ա. նկարի դրամը կորսուած էր չորս հազար դրամ պարունակող վաճառքի ցանկի մը մէջ, որ ժ.Լ. դարու Թուրքեստանի, Ռակոսայի, Ռումանիոյ եւ Ռուսիոյ դրամներ կը հաշուէր: Ան նկարագրուած էր իբրեւ «Հայաստանի» դրամ (անորոշ, պրոնզ, կրկնադրոշմուած), եւ հետեւաբար ձեռք բերինք հայկական պղնձեայ դանդին բնականոն արժէքէն քիչ մը աւելիով:

Առկայ են ճանչցուած հայկական պղնձեայ թափօն դրամներ, ի տես հայկական հարագատ դրամներու ցած շուկայի արժէքին: Անկասկած կեղծարարի մը համար քաջալերիչ շահագրգռութիւն մը չէ ժամանակ ու դրամ ծախսելով կաղապար քանդակել կամ ալ բաւական ծախսալից գործընթաց հանդիսացող թափօն ճնշումի մեթոտով կեղծ դրամ յառաջացնել: Ուրեմն, նկատելիօրէն աւելի շահաւոր պիտի ըլլայ կեղծել հասարակ, ուշ հռոմէական պղինձներ, որոնք յետոյ կրնան ծախուիլ որոշ քանակութեամբ (պղինձի արժէքէն աւելի բարձր գինով): Թափօն ճնշումի միջոցը աւելի շահաւոր պիտի ըլլայ, քան՝ կաղապարի միջոցը, որուն արտադրածը կրնայ ցոյց տալ յատկանշական կէտեր, եւ անմիջապէս վերածուիլ շահագրգռութեան թիրախի մը՝ բոլոր այն մասնագէտներուն համար, որոնք ծանօթ են հայ դրամագիտութեան եւ հետեւաբար պիտի ենթարկուի մանրագնին քննութեան, ունենայ հետեւանքներ, եւ միայն մէկ օրինակ պիտի ծախուի: Իսկ անոր գինը պիտի ըլլայ շատ աւելի բարձր քան՝ Rauch վաճառքի օրինակինը (նկար Ա.): Միւս կողմէ՝ արտադրելու համար դրամներ, որոնք բոլոր յատկանիշերով ճշգրտօրէն յարմարէին իշխանականէն թագաւորական անցման այս ժամանակաւոր շրջանին, պիտի պահանջէր խիստ մասնագիտացած ու մանրամասն գիտութեան փորձառութիւն: Այսինքն, շատ մեծ գործի փոխան՝ շատ քիչ հատուցում: Նման մանրամասնեալ գիտելիքը վստահօրէն զգուշութիւն պիտի դրսեւորէր հայերէն “Ը” տառին ձեւաւորման հանդէպ: «Վաւերականութեան հարցը (փոխ առնելով Blandի, Burnetti եւ Bendallի վերջերս միասնաբար հրատարակած յօդուածէն)⁷⁸ այն է, որ ուղակիօրէն պէտք է քննուի, քանի որ դրամի հարազատութեան փաստացիութեան լաւագոյն ձեւը անոր ուղակի քննարկումն է»:


Կայ նաեւ Մեթալֆի չափազանց հետաքրքրական եւ շատ նշանակալից տեսակէտը, որ՝ ‘Կարկին’ի գիծերուն փաստէն ելլելով պղնձեայ դրամներու շինծու ըլլալը «ամողջովին անհաւանական» կը նկատէ: Այս անյաղթահարելի վկայութիւնը, շատ տպաւորիչ է զոյգ պատմական ու աշխարհագրական արտայայտութիւններով եւ ինքնին գորաւոր, եթէ ոչ եզրափակիչ, ապացոյց մը, թէ՛ պղնձեայ օրինակները հարագատ են: Նորայայտ այս պղնձեայ դանդերուն օրինակները (եթէ նոյնիսկ կայ որոշ անորոշութիւն՝ արծաթ ու կապար թողարկուածներուն հանդէպ), բոլոր հաւանականութեամբ ձեւեր կամ փորձառական նախատիպեր են եւ՝ Ռուբլնեան հայկական շրջանի արտադրութիւն:



Քարտիս 1, ըստ Cambridge Medieval History, էջ 514



Քարտիս 2, ըստ A Classical Map of Asia Minor, Անքարա, 1958ին, ուր կ'երեւին
 կիլիկեան քաղաքները.- 1՝ Տարսոն, 2՝ Սիս, 3՝ Մամիստրա, 4՝ Ատանա, 5՝ Այաս,
 6՝ Անարզաբա, 7՝ Կոռիկոս, 8՝ Անտիոք, 9՝ Լամբրոն, 10՝ Դուռն, 11՝
 Բարձրբերդ, 12՝ Վահկա, 13՝ Հաճըն, 14՝ Դարպաս, 15՝ Կապան, 16՝ Չէյթուն, 17՝
 Մարաշ, 18՝ Թիլ-Համոուն, 19՝ Հոռմկլա, 20՝ Պաղրաս, 21՝ Այնթապ,
 22՝ Սեւեկիա



Քարտիչ 3, ըստ Muirs Historical Atlas, 1969, էջ 18-13ի

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Յօղուածը անդերէնէ հայացուց Եղիա Թ. Ներսէսեան:

² Ըստ հաւաքորդ Վիգէն Հաւանճեանի, «հաւանականութիւնը պէտք չէ բացառուի, որ դրամները պատկանին աւելի ուշ թուականի՝ ԺԴ. դարու, եւ հաւանաբար նոյնիսկ քանդակուած՝ վերածնունդի շրջանի ձեռքով մը»: Անդրին, Պատուկեան «եզակի (բացառիկ) թողարկում, եւ ոչ թէ որեւէ դրամահատարանի արտադրութիւն» կը նկատէ,

- մեկնելով այն փաստէն որ «բոլոր դրամները կոխուած են նոյն զոյգ կադապարներով», ու որեւէ պատճառ չի տեսներ զանոնք Ռուբինեան շրջանին վերագրելու. «իրենց ոճը, յօրինուածքը եւ երեւոյթը այնքան տարբեր են, որ շատ քիչ վարանում կայ» իր մտքին մէջ, թէ ասոնք ուրիշ շրջանի կը պատկանին: «Ռուբինեան պոլիմորֆներու քանի մը օրինակներ, անորոշ կեղծ հայերէն արձանագրութիւններով (Պտուկեան Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, Քորփուսը, թիւ 2246-2249) տիպական կերպով Ռուբինեան են երեսի պատկերատիպով՝ ձիավար թագաւորը եւ կռնակը՝ քալող առիւծ»: Պէտք է ըսել, սակայն, որ Պտուկեան անտեղեակ էր «կարկին»-ի գիծէն երբ այս դիտողութիւնը կ'ընէր: Մենք զանոնք փորձի կտորներ կամ նախատիպեր կը նկատենք, ու թէեւ առաջին ակնարկով դրամները կ'երեւին ունենալ ժԴ. դարու արտայայտութիւն, սակայն մշակութաբանութիւնը ժԲ. կամ ժԳ. դարունն է: Իսրայէլացի հաւաքորդ Շրեկա Քետարի դրամը պահուած է իր կեղծ դրամներուն հետ: 4 Պտուկեան իր անձնական թղթակցութեան մէջ կը նշէ որ իր այս եւ Սլոքուսի դրամներուն ալիմիտիում նմանահանութիւնները կը հանդէս տուի մը մէջ, որուն վրայ գրուած է «անկարելի դրամներ»:
- 5 Մանօթ թարգմանիչին.- Յօդուածին հեղինակը անհանգստութեան պատճառով չկրցաւ ճշդել նամակին թուականը:
- 6 Մանօթ թարգմանիչին.- Յօդուածին հեղինակը անհանգստութեան պատճառով չկրցաւ ճշդել նամակին թուականը:
- 7 Մանօթ թարգմանիչին.- Յօդուածին հեղինակը անհանգստութեան պատճառով չկրցաւ ճշդել նամակին թուականը: Այսուհետեւ մէջբերումները կը կատարուին այս նամակներէն:
- 8 Անկասկած, այս առաջին հրատարակութենէն ետք, դրամներու այս արտասովոր թողարկումը պիտի ենթարկուի մանրագնին քննութեան, եւ յուսալի է որ կարելի է հասնիլ շրջագրութեան աւելի ճշգրիտ վերծանումի: Որեւէ խնդրանք, թղթակցութիւն կամ լուսանկար՝ այս յօդուածին առնչութեամբ, պէտք է ուղարկուի հեղինակին:
- 9 Այս յօդուածը ամբողջացնելու եւ պատշաճօրէն հրատարակելու որոշումին հասանք երբ պրոպտելով մեր արխիւը նկատեցինք որ այս նիւթին շուրջ մէկտեղուած են յատկանշական դիտողութիւններ՝ ականաւոր միջնադարու բանասէրներ Մայքըլ Մեթքալֆէ, Փիթըր Ուուտհէտէ եւ Պտուկեանէ: Ասոնց ու վաճառականներու, հաւաքորդներու եւ այլ բանասէրներու զանազան դիտողութիւնները համադրելով վերամշակած ենք այս յօդուածը:
- 10 Ըստ Պտուկեանի, «կադապարներուն առանցքային ուղղութիւնը հաստատուն է [այս խնդրոյ առարկայ] դրամներուն չորսին վրայ, մինչդեռ Ռուբինեան Հարստութեան [օրինակական] բոլոր դրամներուն վրայ անկանոն է»:
- 11 Կապարեայ կտորներէն մէկուն կռնակը, ըստ երեւոյթին, կրկին զարնուած է: Կապարէ օրինակները թերեւս կոխուած են թափօն մետաղաձոյլի վրայ:
- 12 Բիւզանդական դրամահատութեան մէջ յարաբերաբար ընդունուած սովորութիւն է պղնձեայ դրամներու կադապարէն արծաթեայ դրամ վերարտադրել:
- 13 Խորագրութեան այս սպուած վերծանումը չի կրնար ճշգրիտ նկատուիլ՝ մեր համակարգիչի սահմանափակ թեքնիքական կարողութեան պատճառով, բայց յուսալի է որ մեծցուած նկարները կրնան ձեւով մը դարմանել այս թերին:
- 14 Ըստի Մեթքալֆէ՝ «Գոակիին տակը, եգերքին, կէտերու/նարգրիտներու շարքը սովորական դանգը» կը յիշեցնէ: Ան «հետաքրքրական,- կը գտնէ զանոնք,- ներկայ ոճին մէջ»:
- 15 Տես ծանօթ. 13:

- ¹⁶ Կռնակին վրայի կրկնաթեւ խաչով առեւծը օծման արծաթեայ թողարկումին վրայ՝ տիպական է Ռուբինեան սկզբնական շրջանին, որով հաւանական կը դառնայ դանդին ժ.թ.-ժ.Գ. դարերու ծնունդ ըլլալը:
- ¹⁷ Լրիւ եւ «ճիշդ» ձեւը տակաւին չէ յայտնաբերուած ամբողջականութեամբ որեւէ դրամի վրայ (տե՛ս՝ Պտուկեան, “Medieval”, էջ 12. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, Լոս Անջելըս, 1981, էջ 201, արտատպուած *Revue des Etudes Armeniennes*էն, նոր շրջան, Հտր. VIII, 1971: Անշուշտ նաեւ կան Սիս արծանագրութեան զանազան ձեւերը, օրինակի համար՝ > (նկար Ա.ի վրայ) քան թէ Շ: Շ ձեւը տրուած է Պտուկեանի գրչանկարներուն մէջ որպէս առաջին տառը ‘Շինեալ’ բառին (Պտուկեան, “Medieval”, էջ 12. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, էջ 201-202):
- ¹⁸ Ասկէ կ’ենթադրենք որ կաղապարը փոփոխութեան ենթարկուած է դրամահատութեան ընթացքին:
- ¹⁹ Ասիկա սովորական կիրառութիւն մըն է անկլոսաքսոն դրամահատութեան մէջ եւ յատկօրէն նշմարելի՝ Հերակլ եւ Կոստաս Բ.ի բիւզանդական ոսկեդրամներու (nomisma) կռնակի կաղապարներուն վրայ: Ուսումնասիրութիւններ կը հաստատեն որ անկլոսաքսոն դրամները նախապէս զարնուած են չափէն աւելի մեծ հատածոյթերու վրայ, ապա կտրուած՝ սահմանուած ճիշդ չափի:
- ²⁰ Հաւանեան, սակայն, կ’առարկէ. «Տարսոն բառը սովորաբար կրճատուած պիտի ըլլար առաջին երեք տառերուն եւ ոչ թէ վերջին երեքին, եւ չեմ յիշեր դրամներուն վրայ Տարսոն բառին ամբողջութեամբ երեւիլը»:
- ²¹ Ըստ Հաւանեանի, թէեւ, «տառերը I Տարսոնի համար կրճատ հասկնալիօրէն ցերկայացնել շրջուած Ս տառը Սիսի համար»: Տարսոն եւ Սիս բառերուն առկայութեան հաւանականութիւնը յառաջ կը քաշէ այն հարցումը թէ իշխանական դրամները ու՛ր զարնուած են, յատկապէս՝ պարոն Լեւոն Բ.ի (1187-1196) դրամները (տե՛ս՝ նկար Գ): Պտուկեան կը մատնանշէ, թէ Թորոս Բ. (1100-1123) «առերեսոյ վերակազմակերպեց դրամահատարանը (հաւանաբար Սիս մայրաքաղաքի բերդին մէջ)» տե՛ս՝ Պտուկեան, “Medieval”, էջ 8. նաեւ՝ էջ 197 (նկար Գ. (1985), 692, նախապէս Օ՝ Հարայի հաւաքածոյին մէջ, ներկայիս ուր գտնուիլը՝ անյայտ:
- ²² Երկու բիլլոն թողարկումները, մէկը ՍԻՍ դրամահատարանի անունով - Անտիոքի Դքսութեան մէջ շրջանառութեան համար կոխուած - ունին՝ մարգարտաշար շրջափակ (Զարեհ Պտուկեան, «Լեւոն Ա. Թագաւորին Եզակի Մէկ Դրամը Եւ Անոր Պատմական Նշանակութիւնը», *Հանդէս Ամսօրեայ*, Հտր. ԶԱ (Ապրիլ-Յունիս 1967), թիւ 4-6, էջ 171-184. նաեւ՝ էջ 389-395):
- ²³ Իշխանական այլ թողարկումներու տրամագիծը կը փոփոխուի 18-21 մմ: Լեւոնի վերջին թողարկումները աւելի մեծ են, շուրջ 22-24 մմ:
- ²⁴ Զարեհ Պտուկեան, *Կիլիկեան Հայաստանի Դրամները*, Վիեննա 1963, էջ 98 (նախապէս հրատարակուած Ամերիկեան Դրամագիտական Ընկերակցութեան կողմէ, *Coinage Of Cilician Armenia*, Նիւ Եորք, 1962, էջ 88. նաեւ՝ բարեփոխուած անգլերէն հրատարակութիւն՝ Տենպրի Բրնքթիքթըթ, 1979, էջ 88): Պղնձեայ դրամի ներքին առեւտուրի համար գործածութեան վարկածը, քննարկուած է Փրոֆ. Ֆիլիպ Կրիբսընի կողմէ՝ «Մերձատր Արեւելքի Աւանդութիւնը. պղինձը հազիւ թէ նկատուած իբրեւ դրամ, շրջանառութիւնը սահմանափակուած է կոխուած անմիջական վայրին մէջ, - ու կը շարունակէ,- եւ չունի քաղաքական առնչութիւնը, որ կապուած էր ոսկեայ եւ արծաթեայ դրամ կոխելու հետ» *Museum Notes*, Հտր. 10, 1962, էջ 107-112, մասնաւորաբար էջ 111: Վերջինս կը նկատէ թէ «դրամագիտական ինքնայայտ ճշմարտութիւն է, որ պղինձը, հակադրուած ոսկիին ու արծաթին, առեստուրի ընթացքին իր անմիջական թողարկման վայրէն շատ հեռու չի ճամփորդեր» (“Some Reflections on the Figured Coinage of the Artuqids and Zengids”, *Near Eastern Numismatics, Iconography*,

Epigraphy, and History: Studies in Honor of George C. Miles, D.K. Kouymjian (ed.), Պէջրութ, 1974, էջ 353-358):

²⁵ Պտուկեան նկարագրած է իշխանական վաղ շրջանի դրամները եւ փափկանկատու-
թեամբ զանոնք որակած «նշ-գեղարուեստական» (տե՛ս՝ նկարներ Գ., մասնաւորա-
բար՝ Դ. եւ Ե.):

²⁶ Տախտակ, թիւ 11, ձիւղար ասպետ մը դէպի ձախ: Արագ ակնարկ մը տախտակներուն
վրայ ցոյց կու տայ, որ կիսալուսիններ եւ զարդի օղակներ պատկերուած են ուշագ-
րաւորէն Անտիոքի եւ Թրիփոլի Դքսութեանց դրամներուն վրայ:

²⁷ American Numismatic Society, *Museum Notes*, Հտր. 16, 1979, էջ 87-94. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, էջ 172-179:

²⁸ Գոյութիւն ունէին «այնպիսի սօսիկ շփումներ խաչակիր իշխաններու հետ» (տե՛ս՝
ծանօթ. 27, էջ 87 կամ 172), որ ժամանակ մը Լեւոն լրջօրէն փորձեց Անտիոքը կցել
Փոքր Հայաստանին: Երկու երկիրներու առաջարկուած միութիւնը սկզբունքով ան-
հաւանական չ'երեւիր երբ մարդ յիշէ, թէ բիւզանդական Կիլիկիան անշուշտ մեծա-
մասնութեամբ յոյն համայնք մըն էր, եւ անկասկած որոշ յոյն բնակչութիւն մը պիտի
շարունակէր ապրիլ նոր հայ թագաւորութեան մէջ (տե՛ս՝ քարտէս 3):

²⁹ Քարտէս 2ի անունները, աւաններն ու քաղաքները նշանակուած (.) կէտով կրնան
գտնուիլ *A Classical Map of Asia Minor* մէջ, հրատարակուած՝ British Institute of
Archeologyի կողմէ (Անքարա, 1958): Անշուշտ նաեւ կային բնակեցուած բազմաթիւ
ուրիշ աւաններ Փոքր Հայաստանի մէջ՝ ԺԲ. դարու վերջաւորութեան, բայց իրենց ա-
նուններն ու վայրերը միշտ յստակ չեն. այստեղ միայն գլխաւոր եւ ներքամաքեայ ա-
ւաններու ու համեմներու վաճառականութեան համար կարեւոր նաւահանգիստները
նշանակուած են: Բիւզանդիոնի ղեկավարութեան ներքեւ կային բազմաթիւ աւաններ
ու վայրեր ԺԲ. դարու սկիզբին ու կիսուն, որոնք ունէին բիւզանդական կառավարիչ
մը կամ ալ հայ իշխան մը իբրեւ հպատակ Բիւզանդիոնի կայսրին:

³⁰ Պտուկեան, “Medieval”, էջ 7. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, էջ 196: Պատկերա-
զարդուած դրամը որպէս նկար Դ. կարծէք կը վաւերացնէ խումբ մը կանուխ թողար-
կուած դրամներու վերագրումը Պարոն Կոստանդին Ա.ին: Արձանագրուած առաջին
երեք տառերը ընթեռնելի են որպէս «ԿՈՍ». կռնակը կան տառեր, որոնք կը թուին ըլ-
լալ տարբերականեր սովորական «Մառայ» խորագրութեան եւ ամբողջովին կը տար-
բերին այս դասու դրամներու արձանագրութեանց տարբերակներէն (նկար Ե., Հա-
ւանճեանի նախկին հաւաքածոյ *Credit Suisse Auction 4*, 1985, թիւ 688). նաեւ՝
Պտուկեան, էջ 7, 196, թիւ 3, տախտակ թիւ 3: Դժուար է որոշել թէ նկարներ Դ. եւ Ե.ի
դրամները պէտք է վերագրուին Ռուբէն Ա.ի՞ն 1080-1095 թէ՞ Կոստանդին Ա.ին 1095-
1100: Նման դժուարութիւն մը կը պատահի Բիւզանդիոնի կայսր Կոստանդին Ե.ին եւ
իր մեռած հօր արձանագրութեան ու պատկերին պարագային, որ յաճախ դրամին
մէկ կողմն է: Այս ուղղութեամբ տե՛ս՝ Եղիա Թ. Ներսէսեան, “Հայկական Կիլիկիոյ
Պարոնութեան Դրամները”, *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, 1997-2001, էջ 177-198:

³¹ Պտուկեան, “Medieval”, էջ 7-8. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, էջ 196-197:

³² Այս երեւոյթը թերեւս շատ ալ անսովոր չէ. օրինակի համար, Անգլիոյ Ուելիլմ Ա.ի
(1066-1087) դրամներուն վրայ ‘A’ եւ ‘V’ տառերը ներկայացուած են զուգահեռական
գիծերու հարուածներով (C.H.V. Sutherland, *English Coinage, 600-1900*, London: B. T.
Batsford, 1973, էջ 50):

³³ *Coinage of Cilician Armenia* (1979), էջ 112. նաեւ՝ *Կիլիկեան Հայաստանի Դրամները*,
1963, էջ 124 գծադիր (graph) III:

³⁴ *Coinage of Cilician Armenia* (1979), էջ 44 եւ 55. նաեւ՝ *Կիլիկեան Հայաստանի
Դրամները*, 1963, էջ 49 եւ 60. նաեւ՝ Հայր Յարութիւն Աւգերեան, *Բացատրութիւն*

- Չափուց Եւ Կշռոց Նախնեաց, Վենետիկ, 1821, էջ 77: “Դանդ” բառը նաեւ կրնայ ակնարկել ծանրութեան չափի, եւ արծաթեայ ու ոսկեայ դրամներու:*
- ³⁵ *Coinage of Cilician Armenia (1979), էջ 76. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, էջ 84:*
- ³⁶ *Coinage of Cilician Armenia (1979), էջ 9 եւ 76. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, էջ 9 եւ 84. նաեւ՝ Պտուկեան, “Medieval”, էջ 18. նաեւ՝ Selected Numismatic Studies I, էջ 203: Ալեքիոս Գ-ի ուղարկած թագի մասին, տե՛ս՝ Cambridge Medieval History, Vol. 4, Bury (ed.), 1923, էջ 172. նաեւ՝ Սմբատայ Սպարապետի Տարեգրք, Վենետիկ 1956, էջ 207, ուր կը յիշուի (1196ին), թէ «առաքեայ թագաւորն յունաց Լեոն Թագ պատուական եւ խնորէ ի նմանէ զմիաբանութիւն սիրոյ...» եւ էջ 208, ուր կը յիշուի 1198 տարուան «յամսեանն Յունուարի, յօր Յայտնութեան Տեառն, օծին զԼեոն թագաւոր հայոց...»:*
- ³⁷ *Coinage of Cilician Armenia (1979), էջ 76. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, էջ 84. նաեւ՝ Պտուկեան, “Medieval”, էջ 14. նաեւ՝ Selected Numismatic Studies I, էջ 203:*
- ³⁸ K.A. Jacob, “The Coins of Cilician Armenia”, *Seaby’s Coin and Medal Bulletin*, Յունուար 1976, էջ 1-7 եւ Փետրուար 1976, էջ 38-43:
- ³⁹ *Նոյն, էջ 6:*
- ⁴⁰ *Պտուկեան, “Medieval”, էջ 18. նաեւ՝ Selected Numismatic Studies I, էջ 207, թիւ 14. նաեւ՝ Coinage of Cilician Armenia (1979), էջ 139. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, էջ 139, թիւ 76a-81: Հետաքրքրական է նշմարել, որ երկդրամներու սակաւաթիւ տարբերակներ (Credit Suisse Auction, թիւ 700) եւ հազուադիւր մէկ առիւծով օծման դրամի համակարգի օրինակ մը (Credit Suisse Auction, թիւ 709 - մագի երեք փունջով) պատկերած է առիւծը ճիւղաւորուած պոչով, որ թերեւս ներշնչուած է Տարսոնի դանդին ճիւղաւորուած լեզուէն: Նաեւ Տարսոնի դանդ թողարկումին հտեւի առիւծին գլուխը (կիսանկար առանց բաշի), ամբողջովին տարբեր՝ մէկ առիւծով համակարգին հանդիպահայեաց բաշով գլուխէն, խիստ նման է վերջնականօրէն ընդունուած երկու առիւծով արծաթեայ դրամական համակարգի տեսակէն՝ “երկար խաչ մը երկու կանգնած առիւծներու միջեւ կռնակ-կռնակի եւ գլուխնիսն ետ դարձուցած”:*
- ⁴¹ *Coinage of Cilician Armenia (1979), էջ 9. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, էջ 9:*
- ⁴² *Պտուկեան, “Medieval”, էջ 18. նաեւ՝ Selected Numismatic Studies I, էջ 207, թիւ 14. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1979, էջ 139. նաեւ՝ Կիլիկեան Հայաստանի Դրամները, 1963, էջ 139, էջ 76a-81:*
- ⁴³ *Դրամը որ պատկերագրողուած է իբրեւ նկար Բ., Փաւլուի հաւաքածոյին մէջ է եւ հոս գործածուած է Փաւլուի ազնիւ արտօնութեամբ:*
- ⁴⁴ *Մեր յիշողութեան մէջ թարմ են Լեոն Ա. թագաւորի դանդերու այն հազարաւոր օրինակները, որոնց հանդիպեցանք Ատանայի մէջ (հարաւային Թուրքիա):*
- ⁴⁵ *Ըստ Մեթքալֆի, «բաշի նման մազը «մնացորդ» պատկերացում մըն է սովորական դանդէն, եւ որեմն պիտի հակէի զանոնք տեսնել աւելի ուշ թուագրուած քան՝ կամուխ, քանի որ այս ոչ մէկ կերպով ակներեւ ձեւ մըն է ցուցադրելու թագաւորի մը գլուխը՝ ԺԲ. դարուն»:*
- ⁴⁶ J. Porteous, *Coins in History: A Survey Of Coinage From The Reform Of Diocletian To The Latin Monetary Union, London and New York, 1969, 256pp:*
- ⁴⁷ *Jacob, էջ 6:*
- ⁴⁸ *Bedoukian, “Three Notes on Armenian Coins”, Museum Notes, Հտր. 16, 1970, էջ 92. նաեւ՝ Selected Numismatic Studies I, էջ 177: Տե՛ս՝ Վիզէն Հաւանճեանի գրած ներածակա-*

նը **Լեոն Ա-ի** դրամներուն բաժնին մէջ, այս կարեւոր հայկական դրամներու աճուրդին, 1985, *Credit Suisse Auction*, էջ 111, **Նիւ Եորքի** մէջ, «Լեոնի կողմէ պատկերուած առիւծները ունին մարդկային երեսներ եւ կը կրեն թագեր» (այս կը յղեն արծաթեայ դրամները):

⁴⁹ **Օ՝ Հարա** ‘առիւծանման’ (leonine) դանդը «նախատիպ զինանշանի առիւծի գլուխով պատկերացում մը» կը նկատէ «հաւանաբար ներշնչուած իր անունէն (Leo, ինչպէս ինք ստորագրած է) եւ կամ Լեոնի առիւծի նման երեսնալէն»:

⁵⁰ **Հաւանճեան, սակայն**, «չի հաւատար որ կէս դիմերեսի գլուխը այլասերած է առիւծանման գլուխի, թէեւ գնդիկներու վերածուած մազը, կէս դիմերեսի վրայ, կը յիշեցնէ Միսի դանգերը»:

⁵¹ **Լատ Մեթթալֆի** «դէմքը առաջին հայեացքով ունի ԺԴ. կամ ԺԵ. դարու արտայայտութիւն մը»:

⁵² Bodleian Library, MS Asmole 399, f33r, illustrated in M.W. Evans, *Medieval Drawings*, 1969, էջ 31, տախտակ 64: **Մանրամասնութեան համար տե՛ս**՝ “The Onset of a Fatal illness: A Pictorial Case History”: **Գտնուած է որմնակար մը եկեղեցոյ մը մէջ**, Waltensburg, Vuorz, **Զուլիցերիա**, 1330 թուագրուած, որ ցոյց կու տայ պատկեր մը՝ նոյն տեսակ ծոպերով գդակ մը, ինչպէս որ ցուցադրուած է Պոտլէեան գրչանկարին մէջ: **Այս կարեւոր որմնակարներու խումբը առաջին անգամ բացայայտուած է 1930ին եւ 1988ին՝ քահանայ Ulrich Cafilischի խնամքով** (CH-7014 Trin): **Կակուղ գդակի այլ օրինակ մը, աւելի ուշ ժամանակաշրջանի պատկանող, կարելի է տեսնել, ԺԴ. դարու բարեկարգիչ John Wycliffի դիմանկարին մէջ, պատկերուած Larousse Encyclopedia of Ancient and Medieval History**, էջ 360 (նկար Թ.1):

⁵³ **Այս թողարկման տրամագիծը՝ 28-29 մմ. (նման Սիսի առիւծանման գլուխի դրամին), ենթադրաբար ներշնչուած կրնայ ըլլալ բիւզանդական անանուն պղինձներէն, որոնց տրամագիծը տարրաբերուած է 27-33 մմ.ի միջեւ, բայց օրինակներու մեծամասնութիւնը՝ շուրջ 28-29 մմ.ի:**

⁵⁴ **Լատ երեսոյթին, կաղապարի քանդակագործը միջոց չէ պահած մետաղաձուլին վրայ առիւծի ետեւի ոտքերուն համար: Դրամի կռնակին հետ այս անճարակութիւնը կը մղէ ենթադրելու որ հաւանաբար թագ մը ծրագրուած էր փոխան գդակի - նման յոյն աչքի մը, կիսանդրիի մը վրայ, այսինքն թագ մը հանդիպահայեաց երեսոյթով չի յարմարի կիսանկար գլխուն: Թերեւս այս պատճառներով դրամները չէին ընդունուած. եթէ դրամները նոր ձեւեր էին, հետեւաբար չէին ընդունուած բազմաքանակ թողարկման համար:**

Լեոնի եղբօր, Ռուբէնի դուստրին որդին, Ռամունդ-Ռուբէն, ծնած է 1197ին կամ 1198ին, կարեւոր դէպք մը, ինչպէս որ նկատուած է, քանի որ ինք պիտի իշխէր միացեալ Կիլիկիոյ եւ Անտիոքի վրայ (Պատուկեան, «Լեոն Ա. Թագաւորին Եզակի Մէկ Դրամը Եւ Անոր Պատմական Նշանակութիւնը», *Հանդէս Ամսօրեայ*, 171-184. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, էջ 389-395): Երեւակայական է թելադրել, որ յատուկ դրամական թողարկում մը կատարուած ըլլայ տօնելու այս առիթը, երբ Լեոնի օժման արարողութիւնը պիտի նսեմացնէր զայն: Ռանսիմըն կը գրէ, թէ «Ռամունդ (Անտիոքի) սահագաւ 1197ին մէջ, ետին ձգելով երախայ որդի մը, Ռամունդ-Ռուբէն, որ իր մօրը հետ Հայաստան դրկուած էր Լեոնի օժման ժամանակաշրջանին» (*Հար. Գ.*, էջ 99):

⁵⁵ **Նման պարագայի օրինակ է Ռուբինեան ոսկեայ դահեկանը, կոխուած արծաթեայ դրամի կաղապարներով** (Boase *նոյնիսկ յայտարարած է, որ* «Լեոն հռչակեց իր օժումը՝ թողարկելով ոսկեայ դրամներ», էջ 22): **Այլ օրինակներ են Եղուարդ Երէցին** (Edward the Elder, 889-924) **հանրածանօթ երկու Սաքսոն ոսկեայ փենինները որոնք կոխուած են դրամահատ Deonwaldի կողմէ այն կաղապարներով, որոնք գործած-**

ուած են արծաթեայ փենիններ եւ էթրլրէտ Բ-ինը (Aethelred II, 978-1016) կոխելու (Sutherland, էջ 29 եւ տախտակ 146. նաեւ՝ Blunt, *British Numismatic Journal*, XXV (1945-8): Կան են նաեւ չափազանց հետաքրքրական «կապարէ փենիններու» արտասու-վոր երեւոյթները (Sutherland, տախտակ 20 եւ 22, 210): Եղուարդ Խոստովանողէն (Edward the Confessor, 1042-1066) մինչեւ Ստեֆըն (Stephen, 1135-1154) պաշտօնապէս հատանուած կաղապարները կոխուած են արծաթեայ փենիններու կաղապարներով: Marion Archibaldի կողմէ 1989ին հրատարակուած յօդուած մը կը քննարկէ 1988ին յայտնաբերուած եւ քիչ-ճանչցուած համակարգը Հենրի Ա-ի (Henry I, 1100-1135) անտիպ դրամներու, որոնք ունին կաղապարներու բազմաթիւ կրկնութիւններ: Գոյութիւն ունին նաեւ բազմաթիւ բիւզանդական արծաթեայ դրամներ (hexagram), կոխուած ոսկեդրամներու (solidus) կաղապարներով, եւն.: Այս կոխուած է չափազանց հազուադէպ «կրկնակի արձանագրութիւն» տիպ 11ով: Դրամահատարանի ընթացումն է hIIMTV(N)E for HAMTVNE (Northampton or Southampton): Կոխուած է կամ փոքր կապարէ մետաղաձոյլի վրան կամ ալ անորոշ պտածառով յետոյ կտրուած ու փոքրացուած է: Վկայակոչումը եղած է Sutherlandի կողմէ, էջ 25, ծանօթ. 3, կապարէ փորձի կտորի մը (կամ դրամահատարանի ծանրութիւն), դրոշմուած Ալֆրէտէն երկրորդ խումբին դրամահատութեան կաղապարի մը կնիքով (Christopher E. Blunt, “The Chronology of the Coins of Alfred the Great 871-899”, in *Anglo-Saxon Coins*, R. H. M. Dolley (ed.), London, 1961, էջ 77-94, մանաւանդ՝ 81): Ծատ տարիներ առաջ, հեղինակը կը մտաբերէ մէկզի նետելը Հեթում Ա-ի կապարով կոխուած դանգ մը նկատելով իբրեւ կեղծ դրամ մը, հակառակ որ այդ ժամանակ Հեթում Ա-ի դանգերը շուկայի վրայ մատչելի էին տաւաջիօրէն փենսի մը, մինչ կաղապարէ դրամի մը արտադրութիւնը պիտի արժէր աւելի քան պղինձին ծախար: Խնդրոյ առարկայ թողարկումի նկատառութեամբ, կապարէ դրոշմուածքներու գարուստով, երկու հաւանականութիւններ կրնան նախատեսուիլ: մէկ՝ թէ Հեթումի դրամը նախատիպի օրինակ մըն էր, որ ընդունուեցաւ եւ հատանուեցաւ սիսաւ, եւ երկու՝ մտաբերելով Ալեքսիոս Ա-ի (1081-1118) նորայայտ կապարէ կէս tetartera՛ն (նախապէս ոսկեդրամ մը), կը ցուցաբերէ թէ կապարը իր բաժինը ունէր այդ ժամանակաշրջանի դրամահատութեան կառուցուածքին մէջ (P. Grierson, *Byzantine Coins*, London, Berkeley and Los Angeles: Methuen & Co. Ltd., and University of California Press, 1982, էջ 227-228): Հնարաւոր է որ ուրբինեան հայկական դրամահատութեան ընթացքին կապարէ դրամները դործածուած են կարճ փորձառական ժամանակաշրջաններու:

⁵⁶ Մայքըլ Մեթքալֆ, առաջինը նշմարեց «կարկին»ի գիծը, բայց անտեղեակ էր, որ այս «կարկին»ի գիծը նաեւ կը նշմարուի խիստ հազուադէպ Ռուբինեան թագաւորներու դրամներուն վրայ:

⁵⁷ Անշուշտ դիւրին է ամբողջովին տեսնել բարակ ‘կարկին’ի գիծերը այս նոր ‘Տարսոն’ի դրամին երեսին դուրսի եզերքներուն վրայ, որովհետեւ կաղապարները աւելի փոքր են քան՝ մետաղաձոյլը: ուրեմն դուրսի եզերքի մասին վրայ որեւէ բան չէր դրոշմուած: Մինչդեռ իշխանական դրամներուն վրայ, կաղապարը սովորաբար մետաղաձոյլի մեծութեամբ էր եւ ուրեմն դրամի ամբողջ երեսին վրայ դրոշմը կնքուած է: Ամէն պարագայի, ‘կարկին’ի գիծերուն հետքերը յստակօրէն, առանց խոչորացոյցի օգնութեան, կարելի է գատորոշել հեղինակին կողմէ քննուած երեք իշխանական դրամներուն վրայ (նկարներ Գ., Դ. եւ Ե.): Իշխանական դրամներուն հազուադէպ ըլլալու փաստ է այն, որ Աշմովին եւ Բրիտանական Թանգարանները ասկէ օրինակներ չունին, որով եւ դժուար է աւելի կատարեալ կամ ընդարձակ ուսումնասիրութիւն կատարել:

⁵⁸ *Credit Suisse Auction*, թիւ 690:

- ⁵⁹ Bury, *Cambridge Medieval History*, Vol. 4, 1923, էջ 172, 30:
- ⁶⁰ Hussy, *Cambridge Medieval History*, Vol. 4, 1966:
- ⁶¹ Bury, *Cambridge Medieval History*, Vol. 4, 1923, էջ 168, 172:
- ⁶² Պտուկեան, «Կիլիկեան Հայաստանի Դրամները», 1963, էջ 10:
- ⁶³ Պտուկեան, «Medieval», էջ 202:
- ⁶⁴ Hussy, *Cambridge Medieval History*, Vol. 4, էջ 632:
- ⁶⁵ S. Runciman, *History of the Crusades*, Cambridge, England, Հտր. Գ., 1954, էջ 90: Թէէե օծման վայրը չէ յիշուած սակայն լուկեայն կը հասկցուի թէ Սիսի մէջ տեղի ունեցած է. «Թոմրատ Սիս եկաւ պապին պատուիրակով եւ ներկայ եղաւ փառատր օծման արարողութեան»:
- ⁶⁶ T.S.R.Boase, *The Cilician Kingdom of Armenia*, 1978, էջ 19. նաեւ՝ J.S.C. Riley-Smith, *Templars and Teutonic Knights in Cilician Armenia*, էջ 92-117, էջ 111. նաեւ՝ Sirarpie Der Nersessian, «The Kingdom of Cilician Armenia,» *A History of the Crusades*, Kenneth M. Setton (ed.), Philadelphia: University of Pennsylvania Press, 1962, Vol. II, pp. 630-659, էջ 648, ծանօթ. 23:
- ⁶⁷ P. Grierson, *Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks and Whittemore Collections*, Volume Two, Washinton, D.C., Dumbarton Oaks Center for Byzantine Studies, Trustees for Harvard University, 1968, էջ 1, 20:
- ⁶⁸ M.D.O'Hara, «A Find of Byzantine Silver from the Mint of Rome for the Period A.D. 640-750», *Swiss Numismatic Review*, Vol. 64, 1985, էջ 105-140:
- ⁶⁹ Y. T. Necessian, «Levon II Trams Struck in Ayas», *Armenian Numismatic Studies [I]*, Los Angeles, 2000, էջ 334-345, տախտակ 70-71, reprinted from *Armenian Numismatic Journal*, Vol. IV, 1978, էջ 81-90, տախտակ VIII-IX:
- ⁷⁰ Ե. Թ. Ներսէսեան, «Կիլիկեան Հայաստանի Կոստանդին Գ-ի Երկու Թագուորինները», *Armenian Numismatic Studies [I]*, էջ 428-435, տախտակ 78, արտատպուած Բազմալէպէն՝ Հտր. ՃԾՁ, 1998, էջ 65-73: Հոս երկու արծաթեայ դրամներ հրատարակուած են: Մէկը արձանագրուած է «ՇԻՆԵԼ Ի ԶԱՂԱԶ Ս[Ի]Ս», միւսը՝ «ՇԻՆԵԼ Ի ԶԱՂԱԶ ՏԱՐ[ՍՈՆ]»: Քննարկուած երկու թագուորինները ունին երեսի նոյն կաղապարը:
- ⁷¹ Պտուկեան, «Medieval», էջ 31. նաեւ՝ *Selected Numismatic Studies I*, էջ 220:
- ⁷² Ռուբինեան Հայաստանի վաղ շրջանի պատմութիւնը անշուշտ նսեմացուած էր աւելի լաւ ճանչցուած եւ վիպականացուած Սալահէտտինի (Նասիր Սալահ ալ Տին Եուսէֆ, 1169-1193, քիւրտ հիմնադիր Այուպեան Հարսուութեան), Ռիչըրտ Առիւծասիրտի քաջագործութիւններով (Richard I Plantagent of England, 1189-1199) եւ՝ մոնկոլ Ճենկիզ Խանի (1175-1227) շատ հանրածանօթ վայրագութիւններով (քարտէս 3, որ ցոյց կու տայ 1100 թուականի կացութիւնը): Թէէե Լեւոն միացաւ Անգլիոյ Ռիչըրտին՝ Կիպրոսի նուաճումին, սակայն այս բաւարար չէ եղած որ ինք ճանչցուի եւ յիշատակուի անգլիական դպրոցի համակարգի պատմութեան գիրքերուն մէջ (Boase էջ 18):
- ⁷³ Hussy, *Cambridge Medieval History*, Հտր. 4, էջ 632:
- ⁷⁴ Նոյն, էջ 631:
- ⁷⁵ Boase, էջ v:
- ⁷⁶ Հնադարեան ժամանակներուն Տարսոն ականդութիւն եւ համբաւ ունէր իբրեւ քաղաք ուսմունքի եւ փիլիսոփայութեան (William Smith, *Classical Dictionary of Biography, Mythology and Geography Illustrated by Antiquities and Coinage*. London: B. A. Seaby Ltd., reprinted in 1972 (first edition 1858), էջ 746): Սիսի մասին շատ բան չէ իմացուած, բայց Տարսոն միշտ եղած ու ճանչցուած է որպէս կարեւոր դրամահատարան-քաղաք

եւ Փոքր Ասիոյ կարեւորագոյն քաղաքներէն մին: Ներկայիս խեղճուկ թրքական Տարսոնը կը գտնուի Տաւրոս լեռան ստորոտին, դէպի հին Կապադովկիա եւ Լիքաոնիա առաջնորդող անցքերուն վրայ: Ան կառուցուած է Կադնոս գետի երկու ափերուն, շատ բարեբեր դաշտի մը մէջ: Գետը կը հոսի ծովալիճի մը մէջ, որ կը կազմէ Տարսոնի նաւահանգիստը, եւ նաւարկելի է մինչեւ քաղաքը, ու Կիլիկիոյ շատ կարեւոր բազմաթիւ ճամբաները հոս կը հանդիպին: Շատ յարմար վայր մըն է նոր թագաւորութեան մայրաքաղաքի համար: Թէեւ Boase գրած է, որ Կադնոսի գետաբերանը տիղմով լեցուիլ սկսած է 1183ին եւ Տարսոն սկսած է իր կարեւորութիւնը կորսնցնել Այսսին: Այս տեղեկագրութեան մէջ քաղուած քարտէսները ընդհանրական ուղեցոյցի համար են եւ պէտք չէ ճշգրիտ նկատուին:

⁷⁷ Zareh Bedougian, *Coinage of Cilician Armenia*, 1979, էջ 101. նաեւ՝ *Կիլիկեան Հայաստանի Դրամները*, 1963, էջ 112:

⁷⁸ R.F. Bland, A.M. Burnett, and S. Bendall, “The Mints of Pescennius Niger in the Light of Some New Aurei”, *Numismatic Chronicle*, Vol. 147, 1987, էջ 65-83, տախտակ 10-13:

A LATE 12TH CENTURY ENIGMATIC ROUPENIAN ARMENIAN COIN AND ITS
 RENAISSANCE-STYLE PORTRAIT
 (Summary)

MICHAEL DENNIS O’HARA
 michaeldennisohara@ntlworld.com

The study is about a controversial coin and is prepared to serve as a model for future issues. The coin, of which eight examples are known to the writer (five struck in copper, one in silver, and two in lead), was struck ca. 1197 and attributed to Baron Levon II of Cilicia.

The coin dies were probably engraved by non-Armenian die-cutters in the mint of Tarsus. Some of the letters are in Armenian, but there are letters resembling Latin and Greek. Generally, the coin is badly struck similar to Roupenian baronial coinage.

The author tried to reconstruct the legend using pictures of all eight examples.

The subject coin served as a prototype or a source of inspiration for the copper *tank* of King Levon I, struck in the mint of Sis. However, the Sis *tank* depicts a ‘leonine’ obverse; here the profile of Levon is reminiscent of a Renaissance style portrait.

The author brings forth several arguments on the authenticity of this coin, like the presence of ‘compass’ lines visible on the copper pieces, the Armenian lettering, the double struck coins (one in copper and one in lead).

The study sheds light on the mint practices in the Baronial period of Roupenian Armenia. It provides a new reverse type as evidence that the mint of Tarsus could have been in operation from as early as 1197 and raises a question about the depiction of a stunning and possibly characterized portrait bust of Levon I, which in its conception would seem to be hundreds of years before its time.